ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/146

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարան
Մասնակից՝ «Արթուր Գևորգյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝ Արթուր Գևորգյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, գույքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8863-2021 գրությամբ «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի 26.05.2021թ.-ի թիվ 286 գրության հիման վրա, 02.06.2021թ.-ին «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 02.06.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 03.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/146 համարի ծածկագիրը:

09.06.2021թ.-ին և 25.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.06.2021թ.-ին:

2. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանը 26.05.2021թ.-ի թիվ 286 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի կարիքների համար «ԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով մանկապարտեզի գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման ձևով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ն: Սահմանված ժամկետներում սույն թվականի մայիսի 12-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում՝ տուժանքի ձևով, իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

Սույն թվականի մայիսի 21-ին «Արթուր Գևորգյան» ԱՁ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8863-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով 09.06.2021թ.-ին հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին:

4. <u>ՍՑ-LO-2021/146 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գույքի ձեռքբերման նպատակով 27.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ),

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 12-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով՝ գնային առաջարկով, 12-րդ չափաբաժնի համար առաջարկել է 13 000 ՀՀ դրամ գումար:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.05.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 5.1-րդ կետի համաձայն՝ 12-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ն:

vi. 05.05.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օր:

vii. Պատվիրատուն 12.05.2021թ.-ին, Մասնակցի artakmek@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով պայմանագրի նախագիծը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների օրինակները:

viii. Մասնակիցը 21.05.2021թ.-ին դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ 12.05.2021թ.-ին ստացել է պայմանագիր կնքելու առաջարկ՝ ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչվելու կապակցությամբ (չափաբաժնի գինը՝ 13000 դրամ): Մինչև այդ՝ անգործության ժամկետում (06.05.2021թ.) ուղարկվել է գրություն այն մասին, որ գնային առաջարկում թույլ է տրվել սխալ՝ 13000դրամ*60հատ=780000 դրամ ընդհանուր արժեքի փոխարեն նշելով մեկ միավորի գինը՝ 13000 դրամ՝ խնդրելով այդ սխալը համարել տեխնիկական վրիպակ:

Միաժամանակ Մասնակիցը տեղեկացրել է, որ հրաժարվում է «ԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում պայմանագիր կնքելու առաջարկից, քանի որ հասկանալի պատճառներով նման ցածր ընդհանուր գնով հնարավոր չէ 60 հատ ներքնակ մատակարարել:

ix. Հանձնաժողովի 25.05.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակիցը 2021թ.-ի մայիսի 21-ին հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

x. 26.05.2021թ.-ին գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8863-2021 գրությամբ «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին

ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝

համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի կողմից գույքի ձեռքբերման նպատակով 27.04.2021թ.-ին հայտարարված «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ն հայտի թիվ 2 հավելվածով՝ գնային առաջարկով, 12-րդ չափաբաժնի համար առաջարկել է 13 000 ՀՀ դրամ գումար, ինչով պայմանավորված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 5.1-րդ կետի համաձայն ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից: 05.05.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օր: Պատվիրատուն 12.05.2021թ.-ին, Մասնակցի artakmek@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով պայմանագրի նախագիծը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումների օրինակները: Սակայն Մասնակիցը 21.05.2021թ.-ին դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ 12.05.2021թ.-ին ստացել է պայմանագիր կնքելու առաջարկ՝ ՀՀ Կոտայքի մարզի Վերին Պտղնիի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչվելու կապակցությամբ (չափաբաժնի գինը՝ 13000 դրամ): Մինչև այդ՝ անգործության ժամկետում (06.05.2021թ.) ուղարկվել է գրություն այն մասին, որ գնային առաջարկում թույլ է տրվել սխալ՝ 13000դրամ*60հատ=780000 դրամ ընդհանուր արժեքի փոխարեն նշելով մեկ միավորի գինը՝ 13000 դրամ՝ խնդրելով այդ սխալը համարել տեխնիկական վրիպակ: Միաժամանակ Մասնակիցը տեղեկացրել է, որ հրաժարվում է «ԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում պայմանագիր կնքելու առաջարկից, քանի որ հասկանալի պատճառներով նման ցածր ընդհանուր գնով հնարավոր չէ 60 հատ ներքնակ մատակարարել: Հանձնաժողովի 25.05.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակիցը 2021թ.-ի մայիսի 21-ին հրաժարվել է պայմանագիր կնքելուց: 26.05.2021թ.-ին գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿՄՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8863-2021 գրությամբ «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-LO-2021/146 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արթուր Գևորգյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**